ՖԵԼԻՔՍ ՄԵԼՈՅԱՆ

ԳԻՐԸ ԱՄԵՆԱԶՈՐ ԵՎ ԱՊԱՎԵՆ

Ռուբեն Հովսեփյանի 70-ամյակը

Հեշտ չտրվեց Ռուբեն Հովսեփյան անունը, որ վավերական արձակագրի իր կոչումն է և առաքինի մարդու իր համբավը: Ոգորումը ենթադրելի է՝ ոչ արձակագիրն է մեկ պոռթկումով կայանում և ոչ էլ առաքինի մարդու համբավն է մեկ արարքով հարատևում: Էջ էջի, էջ էջի՝ պատմվածք, վիպակ ու վեպ: Օր օրի, Աստծո ամեն օր՝ ապրելակերպ կամ որպիսություն, որի մեջ կալանված ես: Արձակագրի սովորական կյանք է սա, եթե նույնիսկ չի գրվում, գրիչդ վայր ես դրել ու քեզ տվել ուրիշ բանի: Թող որ Ռ. Հովսեփյանի խառնվածքի մի եզրն էլ քաղաքական ակտիվությունն է, դրանից նրա նկարագիրը չի փոխվում, մեկ է՝ լեզուդ չի բռնում քաղաքական գործիչ ասես, քանզի տեսանելի իր գոյությունը հասարակական-քաղաքական կյանքում կոչումով գրողի ու արդարամիտ մարդու անփոփոխ ներկայություն է:

Յուրաքանչյուր հայի կենսագրություն կրկնում է հայ ժողովրդի պատմությունը: Միջադեպ-հատվածական, դրվագազարդ ու անձնավորված: Որպես վաղնջական ժամանակների արձագանք, որպես նույն ճանապարհի ճամփորդ կամ նույն ծառի պտուղ: Իր գրի մարդիկ, ինքն էլ հետները, հայոց ճակատագրի կրողներ են: Ինքն էլ, քանզի իր հերոսները իր կենսագրության բնակիչներն են, որոշակի առումով՝ իր կենսագիրները: Այս մարդիկ կոչված չեն ապրելու ազգային կյանքից դուրս, սրանք տեղահանվում են, բայց չեն տարագրվում ազգային ճակատագրից ու աշխարհաքաղաքացի չեն դառնում, անցյալը սրանց կոպերի տակ է ու փեշից կախ: Հովսեփյանի հերոսները մի քիչ խենթավուն են ու մի քիչ քմահաճ, մի քիչ հուսաբեկ են ու մի քիչ բռնկուն, սրանք ցավի զավակներ են: Եվ այն լեզուն, որ սրանց ազգային պատկանելություն է շնորհել ու մղել գործողությունների, անխառն հայերենն է՝ որպես մտածողություն ու հոգեբանություն, որպես աշխարհայացք ու վարվելակերպ, որպես մարդկանց ու պատմական ժամանակների հաղորդակցման միջոց: Սրանց ինքնությունը հունցել է հայոց պատմությունը, սրանք երեկվա օրվա մեջ ապրեցին, և եթե «Ծիրանի ծառերի տակ»-ը պիտի քաղաքական վեպ

բնութագրվի, ինչո՞ւ չի կարելի պատմավեպ համարել՝ հենց նույն բնութագրական հատկանիշների նկատառումով: Միայն թե մարդն անցյալում չի ապրում և եթե ապրում է՝ ապրում է այսօր, և Ռ. Հովսեփյանի հերոսներից ի վեր ժամանակը չի փոխել մարդուն:

Իրենց կենցաղի, իրենց առօրյայի մեջ որսված Հովսեփյանի մարդիկ սոցիալական կյանքի համայնապատկեր բացում են, բայց սոցիալական գերակա հնչեղություն չեն տալիս պատումին: Չարի ու բարու դերակատարներ էլ չեն և բարության խրատներ չեն տալիս ընթերցողին: Այնուամենայնիվ իրականությունը խուլ է արվեստի նկատմամբ, և գրականության մեջ բարոյախոսության միջնորդությունը վտանգավոր է գրի երկարակեցության տեսակետից: Հավատարիմ իրենց բառարմատի մեկնությանն ու ժանրի նախնական կոչմանը, Հովսեփյանի վեպը, վիպակն ու պատմվածքը պատմություններ են՝ կենսանյութով միատարր ու ինքնաբավ: Սրանց գրողական առաջադրանքը ենթատեքստ բալաստով ծանրաբեռ, աղոտ ուրվագծվող սյուժեով մերօրյա այլասացությունը չէ, որ ըստ ամենայնի ենթատեքստ է առանց տեքստի: Ինքը պատմում է, ինքը տեքստ է գոյացնում և քանի որ չի հակառակվում նյութի թելադրանքին ու ասելիք չի պարտադրում նյութին, ենթատեքստի ու տարընթերցման ներուժը իր պատմության ածանցյալներն են: Ո՞վ, ե՞րբ, որտե՞ղ՝ դասական պատումը թելադրում է իր ռեժիմը, և արձակագրի ասելիքը հաճախ այն աստիճան ներդաշնակ է կենսական նյութին, որ, թվում է, նյութի անմիջական թելադրանքն է կամ ասելիք չհետապնդող ինքնին պատմություն, որին ունկնդրել է նաև հեղինակը:

Ռ. Հովսեփյանի ընտրական պատումները այնպես վարպետորեն են լիցքավորվում հույզով ու խռովքով և վարպետորեն էլ լիցքաթափվում, որ ապահովում են և՛ ընթերցողի զգացմունքային մասնակցությունը ներկայացվող անցքերին, և՛ իրենց տեղը հայ արձակի լավագույն գործերի կողքին:

Յոթանասուն տարին ոչ շատ է, ոչ՝ քիչ: Վաթսունն էլ, յոթանասունն էլ, հարյուրն էլ «երկար, հրաշալի օր» է, որի մեջ մի կյանք է ապրվում: Գրողի դեպքում՝ մի կյանք է ապրվում ու մի գիրք է գրվում: Գիրքը տրոհվում է մասերի, բայց դրա ներգրական կյանքի ճակատագրի ծիրը չի բեկվում, էլի մի կյանքի պատմություն է: Ռ. Հովսեփյանի օրվա ցավոտ սկիզբը շարունակվեց Գեորգի հայրումայր ազնվական մարդու գուրգուրանքի միջով, ով սեփական տառապանքի դիմաց շռայլ վարձք համարեց և խանդավառությամբ կրեց գրողի հոր իր հպարտությունը: Հետո փախուստ էր թե որոնում՝ հայտնվեց Հայաստանի հողից ու նրա ընդերքից հեռու գործ բռնած երկրաբանական մի արշավախմբում: Եվ քանզի իր համար պահված օգտակար հանածոն իրենից դուրս չէր, թուրքմենների հալածական ավազուտներում սկսեց պեղել իրենց ընտանի հողակտորը, տոհմական ոստայնացանցն ու իր արթմնի

երազները: Ինքը գրող էր, ինքն իրեն գրող ճանաչել էր երևի թե վաղ պատանությունից, բայց երբ թողեց երկրաբանությունն ու ձեռքն առավ գրիչը, դա գրականության համար անառակ որդու վերադարձ չէր՝ Ռուբեն Հովսեփյան անունով արձակագրի մասին գրական աշխարհում լսած չկային: Եվ քանզի մեծ ջանքին առընթեր է գրականությունը, անցավ այն ամենի միջով, ինչը փորձություն է գրական կյանքում և գորշ իրականություն է՝ գետնամած ու անթով: Եվ ընտելական էր տքնանքը, երբ նույնիսկ ապրում էր Համո Սահյանի սիրո մեջ և իր՝ այնուամենայնիվ բացառիկ սերնդի արձակագիրների ամենահնչեղ անունների երթում էր: Իսկ երբ յոթանասունին էր մոտենում, և կարծես ժամանակն էր ետ նայելու անցած ճանապարհին ու ամփոփելու արվածը, «Ծիրանի ծառերի տակ»-ը խառնեց բոլոր հաշիվները: Պարզվեց տաշտաքեր չէ ու չի եկել լրումի բերելու եղածը, ճանապարհի գիրք է, որ ընթացք է պարտադրում և արձակագրին հանձնառու դարձնում նոր գործերի...

Քմահաճ չէ այն դատողությունը, թե յոթանասունը ոչ շատ է, ոչ՝ քիչ: Եվ ոչ էլ անարդար է: Անարդար կլիներ, եթե դրան չհավելեի՝ Ռուբեն Հովսեփյանի յոթանասունը քիչ է: